

Ռ. Ա. ՍԱՅՐԱՍՏՅԱՆ

ՕՍՄԱՆԻՉՄԻ ԴՈՎՏՐԻՆԱՆ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ (1908—1916 ԹԹ.)

Ազգային հարցում երիտթուրքական կուսակցության հիմնական քաղաքական քաղաքական կոնցեպցիան՝ օսմանիլմի (osmanilik) զոկտրինան, մինչև օրս ուսումնասիրվել է գլխավորապես հրապարակախոսական բնույթ ունեցող սկզբնաղբյուրների հիմքի վրա: Սույն հոդվածում որպես օսմանիլմի պատմության սկզբնաղբյուր գիտական շրջանառության մեջ են մտցվում «Միություն և առաջադիմություն» կուսակցության փաստաթղթերը:

Մեր կողմից օգտագործված փաստաթղթերը բաժանվում են երկու խմբի: Առաջին խումբը կազմում են կոմիտեի քաղաքական ծրագրերը, որոնք ընդունվել են իթթիհադականների 1908 և 1913 թթ. համագումարներում և փոփոխությունների ենթարկվել ու լրացվել 1911 և 1916 թթ. համագումարներում, ինչպես նաև 1909 թ. և 1913 թ. ընդունված ու 1911 և 1916 թթ. մասամբ փոփոխված և լրացված կուսակցական կանոնադրությունները: Այս փաստաթղթերը հրատարակել է թուրք պատմաբան Թ. Ջ. Թունայան¹: Նրանց ուսումնասիրությունը թույլ տվեց բացահայտել այն կոնկրետ ձևերը, որոնցում իրենց մարմնավորումն էին գտնում օսմանիլմի տեսական գրոյթները նրա՝ քաղաքական կոնցեպցիայի փոխակերպման ընթացքում:

Հոդվածում օգտագործված փաստաթղթերի մյուս խումբը «Միություն և առաջագիմություն» կուսակցության կենտկոմի շրջաբերական նամակներն են վիլայեթների բաժանմունքներին, որոնցում պարզաբանվում են ներքին քաղաքականության սկզբունքային հարցերը, տրվում է նրա (ներքին քաղաքականության) տեսական հիմնավորումը: Դրանք հրատարակվել են Բ. Ն. Դուրուի կողմից, որը ծամանակին երիտթուրքական կուսակցության անդամ է եղել²: Այդ փաստաթղթերը, որ ցայսօր դուրս են մնացել մասնագետների տեսադաշտից, եզակի

ընույթ ունեն, քանի որ Անտանտի պետութիւնների կողմից Կոստանդնուպոլսի օկուպացման տարիներին իթթիհադականների կենտրոնի արխիվը անվերադարձ կորել է³:

Շրջաբերական նամակները, որոնք նախատեսված չէին հրապարակման համար, արժեքավոր են նրանով, որ թույլ են տալիս թափանցելու երիտթուրքերի քաղաքական գաղափարախոսութեան խորքերը:

Օսմանիդը երիտթուրքերի գաղափարախոսութեան մեջ կարեւոր տեղ էր գրավում դեռևս XIX դ. վերջերից: 1908—1909 թթ. հեղափոխութեանը նախորդող տարիներին երիտթուրքական շարժման առաջնորդները ձգտում էին այն օգտագործել զլիսավորապես որպես հպատակ ժողովուրդների բուրժուական կուսակցութիւնների և կազմակերպութիւնների հետ դաշինքի գաղափարական հիմք: Այդ նպատակով երիտթուրքական մամուլի էջերից լայնորեն պրոպագանդվում էին «բոլոր օսմանցիների. եղբայրութեան և հավասարութեան» և «համաօսման. հայրենասիրութեան» գաղափարները, փորձեր էր արվում հավատացնել, որ սահմանադրութեան հռչակումը կլուծի երկրի բոլոր պրոբլեմները, այդ թվում ազգայինը⁴:

1908 թ. հուլիսին իշխանութեան գլուխ անցնելուց հետո երիտթուրքերի առջև ծառացավ հետևյալ կարևոր խնդիրը, մշակել ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ իրենց քաղաքականութեան հիմքերը՝ ելնելով օսմանիդի ընդհանուր դրույթներից⁵: Այդ խնդրի լուծման առաջին փորձը կուսակցութեան ծրագրի օգոստոսյան (1908 թ.) նախագիծն էր⁶, որը և դարձավ նույն թվականի հոկտեմբերին, «իթթիհադ վե թեբաքի» համագումարի կողմից ընդունված ծրագրի տեքստի հիմքը⁷: Նրկու տեքստերի միջև որոշ տարբերութիւններ կային. օգոստոսյան նախագիծը կազմվել էր մի այնպիսի ժամանակ, երբ երիտթուրքերը սուր կերպով զգում էին Մակեդոնիայում լայն հեղինակութիւն վայելող «Ներքին Մակեդոն-Օդրինյան հեղափոխական կազմակերպութեան» («Լեվիցա») աջակցութեան կարիքը: Այդ պատճառով նրանք որոշ զիջումների գնացին, որն իր արտացոլումը գտավ օգոստոսյան նախագիծում⁸: Հետագայում ծրագրի վերջնական տեքստում նրանք այդ զիջումներից հրաժարվեցին:

Մրագրում իրենց արտացոլումը գտան օսմանիդի դոկտրինայի համարյա բոլոր հիմնական դրույթները:

Հետևելով դեռևս XIX դ. 60—70-ական թթ. «Նոր օսմանների» սահմանադրական շարժման ղեկավարների կողմից ձևակերպված «օսմանյան ազգի» կոնցեպցիային, երիտթուրքերը կայսրութեան բոլոր

հպատակներին, անկախ նրանց ազգությունից և դավանանքից հռչակեցին օսմանցիներ (osmanlılar) (կետ. 9 և 20): Որպես հոմանիշ ծրագրում օգտագործվում էր նաև «օսմանյան հպատակներ» արտահայտությունը (կետ 17): Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդները ստանում էին «տարրեր» (unsurlar), այսինքն՝ օսմանյան ազդի տարրեր» անվանումը: Այսպիսով, ենթակա ժողովուրդները, որոնք ղրկված էին նույնիսկ առանձին էթնոնիմով նշվելու իրավունքից, ծրագրի հեղինակների կամքով մտցվում էին այսպես կոչված «օսմանյան ազգի» մեջ որպես նրա բաղկացուցիչ մասեր:

Բոլոր օսմանցիները, այդ թվում նաև ոչ մահմեդականները հռչակվում էին ազատ և հավասար օրենքի առջև, և առանց որևէ խտրականության կարող էին ընդունվել պետական ծառայության (կետ 9): Ծրագրում մտցվել էր նաև կետ ոչ մահմեդականներին բանակ ընդգրկելու մասին (կետ 9): Այդ դրույթներով ծրագրի հեղինակները ձգտում էին ոչ թուրք ժողովուրդների մոտ ստեղծել այսպես կոչված «օսմանյան ազգի» շրջանակներում հավասարության և ազատության» հասնելու հնարավորության պատրանք, դրանով իսկ օժանդակելով ազատագրական գաղափարախոսությունից նրանց հեռացմանը ու օսմանյան տիրապետության դեմ պայքարի դադարեցմանը:

Օսմանիզմի կարևոր մասն էին կազմում ոչ թուրք ժողովուրդների հրեխաներին «օսմանյան հայրենիքին» հավատարմության ոգով դաստիարակելու մասին դրույթները: Մեր կարծիքով դա այն պատճառներից էր, որ ստիպեց կոնգրեսին մեծ ուշադրություն դարձնել կրթության հարցերին, որոնք արտացոլվեցին նաև համագումարի կողմից ընդունված որոշումներում: Այսպես, «Շուրա-ի ումմեթ» թերթում հրապարտված որոշումների 13-րդ կետում հաստատվում էր, որ «հասարակական նախաձեռնություններից լուսավորության տարածումն ու զարգացումն է»⁹:

Լուսավորության բնագավառում քաղաքականության գլխավոր նպատակ էր հռչակվում «Օսմանյան հպատակների դաստիարակումը միասնության և կարգի (Intizam) ոգով (կետ 17)»¹⁰: Այդ նպատակին հասնելու միջոցներ են՝ պետական վերահսկողության սահմանում կայսրության բոլոր դպրոցների, այդ թվում նաև ոչ թուրք ժողովուրդների դպրոցների նկատմամբ, պետական, այսպես կոչված «խառը դպրոցներին» ստեղծում՝ այսինքն՝ դպրոցներ, որոնցում մահմեդականների և ոչ մահմեդականների երեխաները կսովորեին համատեղ, պետական դպրոցներում թուրքական լեզվով պարտադիր ուսուցում (կետ 17):

Բոլոր այս դրույթները փոխառված են ժողովրդական կրթության մասին օրենքից, որն ընդունվել էր 1869 թ. կայսրության մի խումբ աստիճանավորների՝ «ձուլման» կոնցեպցիայի կողմնակիցների ջանքերով¹¹։ Սակայն երիտթուրքերը մտցրին հետևյալ փոփոխությունը. 1869 թ. օրենքով նախատեսվում էր այն բնակավայրերում, որտեղ ոչ մահմեդականները մեծամասնություն էին կազմում, նրանց երեխաների համար ստեղծել պետական տարրական դպրոցներ¹²։ Երիտթուրքերի ծրագրում այդ մասին ոչինչ չի ասվում, միայն ընդգծվում է, որ տարրական դպրոցներում թուրքերեն լեզուն հանդիսանում է պարտադիր առարկա (կետ 17)։ Դրանով իսկ, երիտթուրքերի, որպես կառավարող կուսակցության գործունեության արդեն սկզբնական շրջանում պարզ դարձավ, որ օսմանիդի նրանց մեկնաբանումն ավելի հետադիմական է, քան Թանզիմաթի ժամանակաշրջանի գործիչներինը։

Օսմանիդի կարևոր դրույթներից էր կայսրության ժողովուրդների շրջանում թուրքերենի՝ որպես «օսմանյան ազգի» միասնական լեզվի տարածման գաղափարը։ Այդ նպատակին հասնելուն պետք է ծառայեին թուրքերենը որպես պետական լեզու պահպանելու, ինչպես նաև ողջ պաշտոնական գրագրությունը, հետևաբար նաև դատավարությունը թուրքերենով վարելու, դպրոցներում ուսուցումը թուրքերենով տանելու մասին ծրագրի կետերը։

Ծրագրի մեջ կետ էր մտցվել 1876 թ. սահմանադրության 108-րդ հոդվածի ճշգրիտ պահպանման հիման վրա գավառային իշխանությունների իրավասությունների ընդլայնման մասին (կետ 5)։ Հայտնի է, որ երիտթուրքերը այսպես կոչված օսմանիդի կողմնակիցներն էին։ Սակայն տակտիկական նկատառումներից ելնելով նրանք կոմպրոմիսի գնացին ոչ թուրք ժողովուրդների կուսակցությունների ու կազմակերպությունների և արքայազն Սաբահեդդինի խմբավորման հետ, որոնք պահանջում էին վարչական իշխանության ապակենտրոնացում։ Այդ փոխզիջման արդյունքը եղավ ծրագրի 5-րդ կետը¹³։

Իթթիհադականների 2-րդ կոնգրեսում (1909 թ.) կուսակցական ծրագիրը որոշ փոփոխությունների ենթարկվեց, չնայած և որոշվեց ընդհանուր առմամբ այն թողնել նույնը¹⁴։ Մասնավորապես, ոչ թուրք ժողովուրդների ներկայացուցիչների քննադատության ազդեցության տակ ծրագրում կետ մտցվեց այն մասին, որ առաջին աստիճանի տարրական դպրոցներում «ուսուցման լեզու պետք է լինի այս կամ այն ժողովրդի լեզուն» (կետ 10)։ Այդ զիջումը բացատրվում է նրանով, որ 1909 թ. ապրիլի 13-ի (մարտի 31-ի) հետադիմական խռովության

ճնշումից հետո «Երիտթուրքերը ազգային փոքրամասնությունների շրջանում իրենց հեղինակությունն ամրապնդելու նպատակով որոշ փոխդիշման գնացիկն նրանց հետ»¹⁵։

Նույն կոնգրեսում հաստատվեց «Միություն և առաջադիմություն» կոմիտեի նկրթին կանոնադրությունը։ Օսմանիզմի հետ կապված հարցերը նրանում չէին շոշափվում¹⁶։

1908—1909 թթ. երիտթուրքերի ծրագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իշխանության գլուխ անցնելուց հետո նրանք, հենվելով Թանզիմաթի գործիչների և XIX դ. 60—70-ական թթ. սահմանադրական շարժման առաջնորդների կոնցեպցիաների վրա, մշակեցին Օսմանյան կայսրության տարասեռ բնակչության օսմանացման ծրագիրը։

Այդ նպատակին հասնելու միջոցներն էին.

1. «Բոլոր օսմանցիների հավասարության և եղբայրության, օսմանյան ազգի» (որի մեջ «տարրերի» իրավունքով մտնում էին ոչ թուրք ժողովուրդները) «օսմանյան հայրենիքին» հավատարմության և այլ գաղափարների լայն պրոպագանդան։

2. «Օսմանյան հայրենիքին» հավատարմության ոգով ոչ թուրք ժողովուրդների նպատակաուղղված «դաստիարակությունը» կառավարության հսկողության տակ գտնվող ժողովրդական կրթության հաստատությունների համակարգի միջոցով։

3. Թուրքերենի բռնի տարածումը որպես օսմանյան ազգի միասնական լեզվի։

Դա փաստորեն երկրի ոչ թուրք ժողովուրդների թուրքացման ծրագիրն էր։

Զարմանալի չէ, որ այդ ծրագրի իրականացումը զգալի դժվարությունների հանդիպեց, որոնք պայմանավորված էին այդ պլաններին արաբների, հույների, հայերի և այլ ճնշված ժողովուրդների դիմադրությամբ։ Երիտթուրքերի առաջնորդները, հավանաբար, իրենց հաշիվ էին տալիս, որ «օսմանացման» քաղաքականությունը ձախողվում է։ Հուլիսյան հեղափոխության 2-րդ տարեդարձի կապակցությամբ երիտթուրքերի խոսափող «Թանին» թերթը հրապարակեց «Միություն և առաջադիմություն օսմանյան ընկերության» կողմ ազգին, որտեղ փաստորեն ընդունվում էր, որ տարբեր համայնքների միջև միասնության ստեղծման ջանքերը անհաջողության մատնվեցին¹⁷։ Այդ ստիպված էր խոստովանել նաև Թալեաթ-փաշան 1910 թ. օգոստոսին

երիտթուրքերի փակ խորհրդակցության մասնակիցների առջև իր արտասանած ճառում¹⁸։

Դրա հետ մեկտեղ երիտթուրքերը դեռևս չէին հրաժարվում 1908 թ. մշակված օսմանացման քաղաքականությունից։ Վերը հիշատակված կոչում հայտարարվում էր, որ միասնության ստեղծման ուղղությամբ ջանքերը կշարունակվեն¹⁹։

Օսմանացման քաղաքականության հետ կապված հարցերը հիմնականներից մեկն էին 1910 թ. կայացած կուսակցության հերթական կոնգրեսում։ Կոնգրեսը հաստատեց «Իթթիհադի» նվիրվածությունը օսմանիդին։ Նշվեց, որ երիտթուրքերը ձգտում են կայսրության ժողովուրդների ոչ թե միաձուլմանը, այլ միավորմանը²⁰։ Հավանաբար այդ ճշտումն արվել էր Զիա Գյոքալփի հայացքների ազդեցության ներքո։ Բոլոր դեպքերում, ինչպես ցույց կտրվի ներքևում, այդ դրույթը հիմնականներից մեկն էր օսմանիդի կոնցեպցիայում, որը ձևակերպվել էր 1911 թ. նոյեմբերի 14—15-ի վիլայեթական կազմակերպությունների ուղղված իթթիհադականների Կենտկոմի շրջաբերական նամակում։ Այդ փաստաթղթի հեղինակ է համարվում Զիա Գյոքալփը։

Շարունակելով տակտիկական դիշումների քաղաքականությունը, համագումարը հայտարարեց, որ յուրաքանչյուր ժողովուրդ իրավունք ունի օգտվելու իր ազգային լեզվից²¹։ Այդ հայտարարությունը հակասում էր օսմանիդի վերևում հիշատակված ասիմիլյատորական միտումների և նպատակ ունեւր քողարկելու երիտթուրքերի ազգային քաղաքականության իրական նպատակաուղղվածությունը։

Կոնգրեսի աշխատանքների ավարտից հետո ընկած ժամանակաշրջանը նշանավորվեց իթթիհադականների շարքերում անընդհատ աճող ճգնաժամով։ Երկրում երիտթուրքերի ուժի մից դժգոհության ուժեղացման, ազգային հարցի սրման պայմաններում երիտթուրքական վերնախավի շրջանում սկսեցին ձևավորվել տարբեր խմբավորումներ, որոնք տարաձայնություններ ունեին, մասնավորապես, ենթակա ժողովուրդներին կայսրության կազմում պահելու առավել օպտիմալ միջոցների հարցում²²։ Այսպես, 1911 թ. գարնանը «Միություն և առաջադիմություն» կուսակցության պառլամենտական ֆրակցիայի անդամները կազմակերպեցին այլախոհների խմբավորումը, որն սկսեց կոչվել «Հիդր-ի Զեդիդ» (նոր կուսակցություն)։ Այս խմբավորման կողմից առաջ քաշված ծրագրում, որը բաղկացած էր 10 կետերից, ընդգծվում էր, որ անհրաժեշտ է այսուհետև ևս վարել միավորման քաղաքակա-

նություն, սակայն «էլեմենտների» միավորման կոնկրետ միջոցները չէին նշվում²³։

Օսմանացման նոր ուղիներ առավել ինտենսիվ փնտրում էր կուսակցության մեջ ղեկավար դիրքեր զավթած Թալեաթի խմբավորումը, որի գաղափարախոսը նրա լիակատար վստահությունը վայելող Զիարեյն էր (Գյոքալփ)։ Օսմանիզմի ուսմունքի նոր մեկնաբանման ուրվագծերը սկսեցին ավելի պարզորոշ նշմարվել արդեն նույն 1911 թ.։

Այս առումով հետաքրքիր փաստաթուղթ է երիտթուրքերի Կենտկոմի 1911 թ. նոյեմբերի 14—15-ի շրջաբերական նամակը²⁴։ Նրանում քննադատության են ենթարկվում «Ազատություն» և համաձայնություն» (Հյուրիեթ վե Իթիլաֆ) կուսակցության անվանման հիմքում դրված գաղափարները, որի կապակցությամբ տրվում է օսմանիզմի նոր բնութագրումը և հիմնավորում է նրա նոր՝ «Իթթիհադական» մեկնաբանումը։ Հեղինակը (հավանաբար, դա՝ Զիա Գյոքալփն է) գրում է, որ սահմանադրության վերականգնումից հետո անստիճանաբար բացահայտվեցին օսմանիզմի տարբեր մեկնաբանություններ։ Այդ հարցում խառնաշփոթությունից խուսափելու համար նա առաջարկում է տարբերել օսմանիզմի երկու մակարդակ. սոցիալական և քաղաքական։ Սոցիալական օսմանիզմը միավորում է հասարակության առանձին անդամներին, իսկ քաղաքականը՝ առանձին տարրերին, այսինքն ժողովուրդներին։ «Միաձուլման»²⁵ և «համաձայնության»²⁶ կոնցեպցիաների կողմնակիցները խառնում էին այդ մակարդակները։ Միաձուլման կողմնակիցները պնդում էին, որ օսմանիզմը միավորում է առանձին անհատների, իսկ «համաձայնության» կողմնակիցները գրտնում էին, որ այն միավորում է միայն առանձին ժողովուրդներին։ Այս երկու տեսակետներն էլ սխալ են, քանի որ հաշվի չեն առնում այնպիսի երևույթներ, ինչպիսիք են «լեզուն, պատմությունը, գրականությունը, դավանանքը»։ Սոցիալական տեսանկյունից այդ երևույթները արժանի են հարգանքի։ Սակայն քաղաքական տեսանկյունից «օսմանյան ազդի տարրերը, ոչ մի առանձին իրավունքներ չունեն։ Ընդունել այդպիսի իրավունքներ՝ նշանակում է ծառայել «օսմանյան միասնության» ոչնչացմանը։

Միակ ճշմարիտը՝ «Իթթիհադի» (միություն) տեսակետն է, համաձայն որի «օսմանյան ազգի տարրերը» «սոցիալական օսմանիզմի» տեսանկյունից լեզվի, գրականության և այլ բնագավառներում տարբերության իրավունք ունեն, սակայն, «քաղաքական օսմանիզմի» տեսանկյունից նրանք ոչ մի առանձին իրավունքով օժտված չեն։

Առաջինը, որ աչքի է զարնում վերևում շարադրված կոնցեպցիայի վերլուծության ժամանակ, կայսրության ժողովուրդների լրիվ օսմանացման գաղափարից հրաժարումն է, գաղափար, որի կենսագործման համար երիտթուրքերն այդքան ջանքեր թափեցին և, որը նրանց առաջին ծրագրում արձանագրվել էր որպես գլխավոր նպատակ:

Օսմանիդմի այդ նոր մեկնաբանման մշակման վրա ամենայն հավանականությամբ վճռական ազդեցություն թողեց «օսմանացման» քաղաքականության անհաջողությունը, որը վճռական դիմադրության հանդիպեց ոչ թուրք ժողովուրդների կողմից: Ոչ թուրք ժողովուրդների լիակատար «օսմանացման» անհնարինության ընդունումը շրջադարձային կետ էր ազգային հարցում երիտթուրքերի քաղաքականության մեջ: Մի կողմից նրանք շարունակում էին քարոզել բոլոր օսմանցիների հղրայրության և միասնության գաղափարը և ինքնիշխան շարունակում էին «օսմանացման» քաղաքականությունը, մյուս կողմից գիմում՝ գաղափարաքաղաքական ուրիշ ուսմունքների՝ պանիսլամիզմին և պանթուրքիզմին²⁷:

Նոր քաղաքականության մշակման հարցերը քննարկվեցին երիտթուրքերի 4-րդ համագումարում (1911 թ.): Ցավոք, այդ համագումարի որոշումները դեռևս լիովին հրատարակված չեն: Գրականության մեջ բավական տարածված տեսակետի համաձայն, համագումարի գաղտնի որոշումներով նախատեսվում էր սկսել շրջադարձը օսմանիզմից դեպի պանիսլամիզմի և պանթուրքիզմի դոկտրինաները²⁸:

Կոնգրեսում վերանայվեց և զգալիորեն լրացվեց երիտթուրքերի կուսակցության կանոնադրությունը²⁹: Նրա մեջ մտցվեցին մի շարք դրույթներ օսմանիզմի ոգով, որոնք սակայն խիստ կերպով տարբերվում էին 1908 թ. ընդունված կուսակցական ծրագրի համապատասխան կետերից:

Այսպես, երիտթուրքերը պարտավորվեցին խոչընդոտել... նրանց նպատակների իրականացմանը, ովքեր ձգտում են ազգային և կրոնական տարբերություններն օգտագործելով, ինչպես նաև այլ միջոցներով երկպառակություն և խռովություն սերմանել բոլոր օսմանցիների շրջանում³⁰: Այսպիսով, «օսմանցիների միասնության» մասին կոչերը, հավասարության վերաբերյալ դրույթները 1911 թ. կանոնադրության մեջ փոխարինվեցին «անջատողականների» հասցեին սպառնալիքներով: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կանոնադրությունը նախատեսված չէր հրապարակման համար: Միևնույն ժամանակ

տարրեր տեսակի «կոչերում», «ժողովրդին ուղղված դիմումներում», որոնց հաճախ դիմում էին երիտթուրքերը, հատկապես տրիպոլիտանական 1911—1912 թթ. և բալկանյան 1912—1913 թթ. պատերազմների կապակցությամբ, շարունակվում էին պրոպագանդվել «Օսմանյան հայրենասիրության» գաղափարները³¹:

Այդ առումով բնորոշ են տրիպոլիտանական պատերազմի կապակցությամբ «Իթթիհադի» կոչերը³²:

1911—1913 թթ. շարունակում էին ուժեղանալ վերոհիշյալ միտումները: 1913 թ. կեսին «Իթթիհադի» ղեկավարությունը ազգային հարցում ձևակերպեց նոր քաղաքականության հիմքերը³³: Դրանք սկսեցին աստիճանաբար դրսևորվել կուսակցական փաստաթղթերում:

1913 թ. համաժողովում ընդունված երիտթուրքերի ծրագրի և կանոնադրության տեքստերի վերլուծությունը վկայում է օսմանիզմից նրանց աստիճանական հրաժարման մասին³⁴: Կուսակցության ծրագրի 42-րդ պարագրաֆում, որը նվիրված էր լուսավորության հարցերին, կարելի է գտնել «օսմանիստական» դրույթ այն մասին, որ երկրում լուսավորության տարածման նպատակն է «օսմանյան ազգի միասնության» ձեռքբերումը:

Նույն եզրակացությանը կարելի է հանգել նաև «Միություն և առաջադիմություն» կուսակցության շրջաբերական նամակի ռաւումնասիրության հիման վրա, որը վերնագրված է այսպես. «Ընկերության (Միություն և առաջադիմություն) — Ռ. Ս.) կողմից պաշտոնական նախաձեռնությունների ղեկավարման ուղիների մասին»³⁵ և թվագրվում է մոտավորապես 1913—14 թթ.: Այդ փաստաթղթում տալանալ է արտահայտվում այն մասին, որ սահմանադրական իրավունքներ և ազատություններ տրամադրելուց ավելի լավ կարողացան օգտվել ոչ մահմեդական ժողովուրդները, իրենց աավաակային բանդաները՝ վերածելով քաղաքական կուսակցությունների: Պետության մեջ, որտեղ պետական կրոնը իսլամն է, վտանգ առաջացավ, որ կառավարման մեքենայի ղեկի մոտ կգան ոչ մահմեդական ժողովուրդները»³⁶: Այդ պատճառով, «Իթթիհադի» առջև կանգնած են հետևյալ խնդիրները՝ պառլամենտի ընտրություններն անցկացնել այնպես, որ նրանք պետության շահերին վնաս չհասցնեն, այսինքն ոչ մահմեդական կուսակցություններին թույլ չտալ մեծամասնության հասնել պառլամենտում և հետո ընտրված դեպուտատների մեծամասնությանը համախմբել իրենց ծրագրի շուրջ:

Այսպիսով, այս փաստաթղթում փաստորեն հռչակվում է, «բոլոր օսմանցիների միասնությանը» հասնելու ինդրից հրաժարումը: Կուսակցության «առջև նպատակ էր դրվում պաշտպանել կայսրության մահմեդականների «շահերը»: Օսմանիզմի այսպիսի ըմբռնումը կարելի է անվանել «Մահմեդական օսմանիզմ»³⁷:

Մյուս երկու շրջաբերական նամակներում, որոնք թվագրվում են մոտավորապես 1914—1915 թթ., արդեն «տեսականորեն» հիմնավորում է այնպիսի քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը, որն ուղղված էր «մահմեդականների և թուրքերի շահերի պաշտպանությանը»՝ ի վնաս ոչ մահմեդական ժողովուրդների շահերի³⁸: Դրանցից մեկում քննադատվում էր «միաձուլման» քաղաքականությունը, որն անց էր կացվում ոչ մահմեդականների նկատմամբ Թանզիմաթի ժամանակաշրջանում: Հեղինակի կարծիքով, այն հանգեցրեց երկրում իսլամի ազդեցության ոլորտի նեղացմանը: Իսլամի դերի վերականգնումը հնարավոր է «մահմեդական օսմանիզմի» քաղաքականության իրականացմամբ, ըստ որի մահմեդականները պետք է մնային տիրապետող տարր: Միաժամանակ անհրաժեշտ է հասնել բոլոր մահմեդականների միավորմանը:

Այդ դրույթներն իրենց արտացոլումն գտան համագումարի կողմից կուսակցության ծրագրում կատարված փոփոխություններում³⁹: Այսպես, 1-ին պարագրաֆում նշվում էր այն դերը, որ պետք է խաղար շեյխ-ուլ իսլամը ռեֆորմների իրականացման գործում: «Իսլամության» ոգով դրույթներ մտցվեցին նաև կուսակցության ծրագրի մյուս պարագրաֆներում: Պատահական չէ, որ Զիա Գյոքալփը «Իսլամ» ամսագրում, գնահատելով կոնգրեսի արդյունքները, գոհունակությամբ նշում էր իսլամի ազդեցության ուժեղացումը երիտթուրքական կուսակցության քաղաքականության վրա⁴⁰:

Այսպիսով, երիտթուրքերի կուսակցական փաստաթղթերի ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնելու օսմանիզմի էվոլյուցիայի ժամանակաշրջանները երիտթուրքերի իշխանության տարիներին: 1908—1909 թթ. օսմանիզմը դիտվում էր որպես գաղափարա-գաղափարապես ուսմունք, որի կենսագործումը հնարավորություն կտար մի կողմից հասնել ազգային-ազատագրական պայքարի ոչ մահմեդական ժողովուրդների հրաժարմանը, մյուս կողմից պայմաններ կստեղծեր նրանց աստիճանական թուրքացման համար: Սակայն, արդեն 1910 թ. նշմարվեց օսմանիզմի, Թանզիմաթի գործիչներից և «նոր օսմանների» սահմա-

նադրական շարժումից ժառանգված, այդպիսի, կարելի է ասել, «ավան-
դական» ըմբռնման ճգնաժամը: Սկսած 1911 թ. նրանում ուժեղանում է
զուտ ռեպրեսիվ կողմը:

1913 թ. երիտթուրքերի կուսակցական փաստաթղթերում հանդես է
գալիս օսմանիզմի նոր տարբերակ, որը կարելի է անվանել «մահմե-
դական օսմանիզմ»:

Р. А. САФРАСЯН

ДОКТРИНА ОСМАНИЗМА В ПАРТИЙНЫХ ДОКУМЕНТАХ МЛАДОТУРОК (1908—1916)

Резюме

В статье в качестве источников по истории османизма—основной идейно-политической доктрины младотурок в национальном вопросе—использованы программы, уставы, а также циркулярные письма ЦК партии «Единение и прогресс» вилайетским отделениям, опубликованные турецкими историками Т. З. Тунбая и К. Н. Дуру. На основе изучения этих документов выделяются основные этапы в истории эволюции османизма в период правления младотурок. В 1908—1909 гг. османизм рассматривался лидерами иттихадистов в качестве доктрины, проведение в жизнь которой дало бы возможность с одной стороны добиться отказа угнетенных народов Османской империи от национально-освободительной борьбы, а с другой—создало бы условия для их постепенной туркизации. В 1910 г. обозначился кризис такого «традиционного», унаследованного от «новых османов», понимания османизма, обусловленный все более усиливающимся сопротивлением нетурецких народов политике османизации. Начиная с 1911 г. в османизме нарастает чисто репрессивная сторона. Примерно к середине 1913 г. руководство партии сформулировало основы новой трактовки доктрины османизма. Анализ партийных документов выявляет новое понимание идеи османизации. Отныне во главу угла ставится достижение «единства» между «мусульманскими элементами османской нации».

1 Т. З. Tunaya, Türkiye'de siyasi partiler, 1859—1952. Ist., 1952.

2 К. Н. Duru, Ziya Gökalp. 2. b., Ist., 1965.

Երշարքրական նամակների՝ սոցիոլոգ և բանաստեղծ Զիյա Գյուքալփին նվիրված

գրքում հրատարակվելու պատճառն այն է, որ Ք. Ն. Դուրուն նրան է համարում այդ փաստաթղթերի հեղինակը: Մենք հիմք չունենք չհամաձայնվելու պատմաբանի այս պնդման հետ: Ինչպես հայտնի է, Զիյա Գյուքալփը սկսած 1909 թ. ընտրվել է երիտթուրքերի կենտկոմի անդամ՝ լինելով ըստ էության կուսակցության գաղափարախոսը: Ի Թիվս մյուս հարցերի կենտկոմում նա զբաղվում էր նաև «զաղտնի կազմակերպությունների» և «ազգային փոքրամասնությունների» հարցերով (տե՛ս E. B. Şapolyo, Ziya Gökalp, „İttihat ve Terakki“ ve Meşrutiyet tarihi. Ist., 1943, էջ 108):

3 Զուտ պատահականություն է, որ Ք. Ն. Դուրուի կողմից հրապարակված փաստաթղթերը պահպանվել են: Դրանցից երկուսը պահվում են նրա անձնական արխիվում (տե՛ս այդ մասին K. N. Duru, İttihat ve Terakki hareketinin Ist., 1957, s. 49; K. N. Duru, Ziya Gökalp..., s. 42): Իսկ մյուս երկուսը հանձնել է նրան Միհհաս Շյուքրյունը (Տե՛ս K. N. Duru, Ziya Gökalp., s. 52): Միհհաս Շյուքրյուն Բելգան 1912, 1916 և 1917 թթ. կոնգրեսներում ընտրվել է երիտթուրքական կուսակցության ղեկավար քարտուղար (տե՛ս T. Z. Tunaya, Türkiye..., s. 199):

4 Մանրամասն տե՛ս Ю. А. Петросян, Младотурецкое движение. М., 1971; Его же, Турецкая публицистика эпохи реформы в Османской империи, М., 1985:

5 1907 թ. սեպտեմբերից, երբ ստեղծվեց «Միություն և առաջադիմություն օսմանյան ընկերությունը», երիտթուրք սկսեցին անվանել միայն այդ կազմակերպության անդամներին: Հետագայում այդ ընկերությունը դարձավ զաղաքական կուսակցություն և անվանվեց «Միություն և առաջադիմություն կուսակցություն»:

6 Ցավոք, մենք ձեռքի տակ չունենք այդ փաստաթղթի տեքստը, դրա մանրամասն շարադրանքը տե՛ս В. И. Шнильков?, Младотурецкая революция 1908—1909. гг. М., 1977. с. 179—181.

7 Տեքստը տե՛ս T. Z. Tunaya, Türkiye..., s. 208—210.

8 Այդ մասին տե՛ս АВПР, Ф. Политархив, д. 1031, 1908 г, лл. 14—15 об. Վ. Ի. Մալիկովան նշում է, որ այդ գիշումները վերաբերում էին բանվորական և գյուղացիական հարցերին, Տե՛ս В. И. Шнилькова, Первый проект политической программы младотурок.—Народы Азии и Африки, 1973, № 4, с. 61—68:

9 Տե՛ս որոշումների տեքստում. T. Z. Tunaya, Türkiye..., с. 208.

10 Ա. Սարրուն իր «Երիտասարդ Թուրքիան և հեղափոխությունը» գրքում հրատարակել է երիտթուրքերի 1908 թ. ծրագրի ֆրանսերեն թարգմանությունը, որը լայնորեն օգտագործվում է մասնագիտական գրականության մեջ: Մեր կողմից բերված արտահայտությունը նա թարգմանել է հետևյալ կերպ՝ «Օսմանյան զաղաքացիների միատարրության և միատեսակության ողով ուղուցում» (homogene et uniforme) տե՛ս A. Sarrou, La Jeune-Turquie et la revolution. Paris-Nancy, 1912, с. 42.

Թվում է, որ մեր կողմից առաջարկվող թարգմանությունն ավելի մոտ էր թուրքերեն բնագրին:

11 Այդ մասին տե՛ս Р. А. Сафрастян, Доктрина османизма в политической жизни Османской империи (50—70 гг. XIX в.). Ереван, 1985.

- 12 *SL*՝ս արենքի տեքստում Düstür, c. 2, 1289, s. 184.
- 13 Ինչպես գրում է Թ. Զ. Խունայան, «Ինկերությունը (Միասնություն և առաջադիմություն—Ռ. Ս.), ոչ մի պայմանով չհամաձայնվեց ապականությունացման քաղաքականության հետ» (Տե՛ս T. Tunaya, Türkiye..., s. 184).
- 14 Փոփոխված օրագրի տեքստը տե՛ս նույն տեղում, էջ 211—212:
- 15 В. И. Шпилькова, Младотурецкая революция..., с. 256—257.
- 16 Նրիտթուրքերի առաջին կանոնադրության տեքստը տե՛ս T. Z. Tunaya, Türkiye..., 210—211.
- 17 Եղուիս րովանդակության շարադրանքը տե՛ս F. Ahmad, The Young Turks Oxford, 1969, s. 84.
- 18 Թալեաթի ճառը առաջին անգամ հրատարակվել է ֆրանսերեն թարգմանությամբ՝ R. Pinon. L'Europe et la Jeune Turquie. Paris, 1911, 100—102.
- 19 F. Ahmad, The Young Turks..., p. 84.
- 20 Պիոնը, հենվելով Փարիզում հրատարակվող «Ժյոն Թուրքի» պարբերականի վրա, բերում է համազումարում քննարկված հարցերի ցուցակը (տե՛ս R. Pinon, L'Europe..., p. 99). Ցավոք, Թունայան հիշատակում է միայն այն որոշումները, որոնք վերաբերում էին ներկուսակցական կյանքին: Տե՛ս T. Z. Tunaya, Türkiye..., s. 191.
- 21 R. Pinon, L'Europe... p. 99.
- 22 Г. З. Алиев, Турция в период правления младотурок (1908—1918). М., 1972, с. 207—209.
- 23 Այդ օրագիրը հրապարակել է Մ. Սալահեդդինը՝ M. Salaheddin, Bildiklerim El-Kahire, 1918, s. 153.
- 24 Տեքստը տե՛ս K. N. Duru, Ziya Gökalp..., s. 48—52.
- 25 Զիյան նրանց շարքին է դասում Թանզիմաթի գործիչներին:
- 26 Նրանց թվին էին պատկանում «Ազատություն և համաձայնություն» կուսակցության կողմնակիցները:
- 27 Ն. Ղ. Սարգսյան, Պանիսլամիզմի և պանթուրքիզմի դոկտրինաները երիտթուրքերի ներքին քաղաքականությունում.—Արևելագիտության հարցեր, Երևան, 1983, № 1—2, էջ 5—19:
- 28 Տե՛ս, օրինակ Զ. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք Ա, Երևան, 1982:
- 29 Կանոնադրության փոփոխված կետերի տեքստը տե՛ս T. Z. Tunaya, Türkiye..., s. 212—214.
- 30 Նույն տեղում, էջ 212:
- 31 Համազումարից հետո Երիտթուրքերը հանդես եկան հայտարարություններով, որ տեղ շարունակում էին օսմանիզմի պրոպագանդան, տե՛ս Ազատամարտ, 1911, № 709, 724:
- 32 T. Z. Tunaya, Türkiye..., s. 191—192.
- 33 Y. H. Bayur, Türk İnkılatı Tarihi. C. 2, k. IV, Ankara, s. 314.
- 34 Տեքստերը տե՛ս T. Z. Tunaya, Türkiye..., s. 214—218, 218—225.
- 35 Տեքստը տե՛ս K. N. Duru, Ziya Gökalp..., s. 42—47.
- 36 Նույն տեղում, էջ 45:

- 37 Այս տերմինը առաջարկվել է Տերոզ Ահմադի կողմից տե՛ս F. Ahmad, The Young Turks..., p. 136.
- 38 Տեքստերը տե՛ս K. N. Duru, Ziya Gökalp..., s. 53—62, 67—76.
- 39 Փոփոխված կետերի տեքստը տե՛ս T. Z. Tunaya, Türkiyede..., s. 225—226.
- 40 Ziya Gökalp, İtilhad ve Terakki kongresi.—Ziya Gökalp. Makaleler, VIII, Ank., 1981, s. 60